


*Մ*. ՕՐՈՒԵԼՈՎ

## ԱԿՄԲԱՆՈՑՆԵՐ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՒ ՀՆԴՀԱՆՐԱ-  
ՊԷՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱ-  
ՄԱՐ.

*Թուրգ.* Pessimist

Արտասպած «ԼՈՅԱ» շաբարարերից



ԱՌ-ՀԱՅ-ԶԵՒԱՆ  
Տպ. Ս. Յ. Ալավերդի  
ՀԱԽԻՉԵՎԱՆ ն-դ.  
Պար. տիպ. Ս. Յ. Ավակովա

1914

371.8

0-15

44

0120-10

Ա. ՕՐՈՒԵԼՈՎ

## ԱԿՄԲԱՆՈՑՆԵՐ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՒ ՀՆԴՀԱՆՐԱ-  
ՊԵՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱ-  
ՄԱՐ.

Թարգ. Pessimist

Արտասահման «ԼՈՅԱ» շարժարերից

НАХИЧЕВАНЬ н. д.  
Типографія С. Я. Авакова

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՎԱՆ  
Տպալուսն Ս. Յ. Ավագեանի

1914

070828

## ԴԵՇՑՈՒՄՊԱՐԱ

յնամասինուար խնայոք այսպահու դժմացք  
ուղար օտք ՀԱՅ Առաջար չ բարձաւ զգեղասա  
և մամկեռաւասոր իր պիտու թրաց վը  
բան նու արա կողմէաւ այս գյուղանուար լրա  
ժայռայր ըստաց և ո լոյք ըստայ Խուճով չ  
ուսուա ուղար պահան ամաս նույնուա, ազար

ԱԿՄԲԱՆՈՑՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՒ ԸՆԴ-  
ՀԱՆՐԱՊԵՍ ԵՐԻՏԱՍՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ\*)

Հայ իրականութեան տիսուր, երբեմն յուշ  
սահատութեան հասցնող պատկերի մէջ, եթէ եր-  
բեմն գործելու, ձգակելու որկ է աղբիւր կայ  
այդ միայն... նոր աճող, գործունէու-  
թեան համար պատրաստուող, պատանիներն ու  
երիտասարդներն են. Սակայն նրանց կրթութիւնն  
առ այժմ այնքան աննախանձելի, այնքան ան-  
կազմակերպ է, որ մասնաւանդ վերջին տարինե-  
րում կրթուող սերունդն ինքն իսկ բողոքում է,  
հրապարակով իր դժունութիւնը յայտնում այդ  
ձեի կրթութեան դէմ և յաճախ ոչ անտեղի:

Մի քանի գիտութիւններից հատուկտոր  
տեղեկութիւններով իր մտաւոր պաշարը կազ-  
մած, միջնակարգ դպրոցն աւարտած մեր երի-  
տասարդները կեանքի մէջ հէնց առաջին քայլից  
այնպէս են հիանթափում, այնպէս կամ հո-  
սանքի բերանն ընկնում տարւում կամ յուսա-  
հատում, լքում, որ 9—10 տարուայ սովորածը,  
դաստիքից անզիր արածն ու 3 կամ 4 թուա-

\*) А. М. Обуховъ-ի „Клубы для учащихся и во-  
обще для молодежи“ գրքոյկի մի մասի թարգմանութիւն,  
1909. Балашевъ ц. 20 կ.

3980-55



նշաններ ստանալու ձգտումով պատասխանածը անարժէք, անկատ է դառնում: Եթէ կան դպրոցի ծրագրի, առարկաների, դասատրութեան և այլ պայմանների պատճառները, առա մհծ տեղ է բոնում դրանց կողքին և նրանց, դպրոցից դուրս, ունեցած աննախանձելի կեանքի, անգոյն, անբովանդակ կեանքի պատճառը: Ով եղել է մեր դպրոցներում դասատր, մանաւանդ գաւառներում, նա լաւ կհասկանայ թէ ի՞նչ ցաւալի միօրինակութիւն է ներկայացնում աշակերտի կեանքը դպրոցից դուրս. ընտանեկան կրթութիւնը պակասում է. քաղաքը կամ գիւղը չունի կրթական—կուլտուրական հիմնարկութիւններ և ահա աշխատանքից յոգնած աշակերտը ձանձրոյթից նեղում կամ փողոցի կեանքի ստոր տեսակի հրապոյըներին է անձնատուր լինում ու հետզհեաէ արձակման արժանանում կամ ինքնիր մէջամփոփուելովնեղսրտանում, փոքրոգանում, դառնում է ժամանակից առաջ ծեր՝ հասակին անվայել «խելօք», «լուրջ», յուհոես ու կեանքի անընդունակ:

Այս նոյն երեսոյթը կայ և ոռւս դպրոցներում և ահա յայտնի մանկավարժո Օբուխովը իր վերոյիշեալ գրքոյկով ուղում է այս չարիքի առաջն առնել. նոյն չարիքը մեր մէջ տեսնելով, կարեոր համարեցի այդ սիրուն առաջարկի հետ և հայ մանուկ սիրնդի կրթութեամբ հետաքրքրուողներին ծանօթացնել, թարգմանելով գրքոյկից էական մասը միայն:

Եղմանակութիւնը ու նաուրայ ուժը նոր սկսական և սկսուած է պայմանութիւնում գումանեցած Զանձրալի, անգոյն և բաւական կոպիտ է ոռւս կեանքը: Պատահանուն նա չի տալիս նրան թարմացնող տպաւորութիւններ, չի տալիս առողջ, բնական հանդիսատ, նա նրա համար առաջ մղող մի զսպանակ չէ, հռանդ չի դարթիցնում:

Մեր հասարակութեան բոլոր խաւերում գերակշռում են անկուլտուրականութիւնը, ճշնշուած լինելը, անտարբերութիւնը և սրա հետ կապուած սուա, գրգռող միջոցների յետեկց ձգտելը: Ինչի՞ ի՞նչ կոշտութեան ու անմտութեան միայն չեն զիմում, որպէսզի մի կերպ դաստարկութիւնը լցնեն, որ տուժամանակ գոնէ մոռանան, հեռանան:

Մինչեւ անգգայութիւն արադ են խմում իւրաքանչիւր յարմար և անյարմար դէպքում, ամբողջ գիշերներ լուսէ լուս թուղթ են խաղում, միմիանց ոսկորներ են փշրում: որոշ ժամերի գլխաւոր փողոցի մայթերն են լցնում, աջ ու ձախ սիրաբանելով, կամ թէ իւրաքանչիւրը նըստում է իւր որջում աստիճանաբար հորիզոնից կորցնելով ամիսն բան, բացի իւր «ես»-ից:

Սեռական հաճոյըները, թէև մտաւոր կամ բանաւոր ձևակելով այդ, նոյնպէս ոչ պակաս տեղ են բռնում բնակչի կեանքում:

Այս ամենը յատկապէս սուր ձեռով երեսում է գաւառում, այսինքն աւելի ճիշտն ասած ամբողջ Ռուսաստանում, բացառութեամբ ի՞նչ որ տասնեակ քաղաքների: Ասինք հէնց այդ մհծ քաղաքներում էլ մի քիչ լաւ. է: Թէև այդ տեղե-

բում գեռ վառւում են կուլտուրայի օջախներ, որտեղ կարելի է մտաւորապէս և բարոյապէս թարմանալ, — զիտութեան և արուեստի օազիսներ են գրանք — բայց գրա փոխարէն որքան փարթամ է աճել այստեղ, շնորհիւ մհծ պահանջի, մարդու ցածր բնազդներին ծառայելով. կաֆէ — շանտաններ, ֆարս, օպերետտա, ուր ամենից աւելի գերադասւում է զգեստի և խօսքի պարզութիւնը. սինեմօտօգրաֆները իրենց լիրք պատկերներով՝ առանձնայատուկ «գրականութիւնը», հրատարակիչների պատկերները, որոնք աշխատում են որսալ տրամադրութեան մոմենտը և այն, այս ամենը, ինչպէս վատ խոց ծածկում, ստուերում է թողնում իսկական կուլտուրական սերմը՝ այն հիմնարկութեանը, որը ծանայնում է մարդուն և ոչ գաղանին:

Վերջին մէկ ու կէս տարբանայ ընթացքում յաջողուել է ինձ լինել Պիտիրբուրգ և Միւնխէն: Դժուար է իրեակայել թէ որքան ենք առաջ զնացել գերմանացիներից ամեն տեսակ հանդիսարանների և ցածր տեսակի, երբեմն նոյն իսկ պոռնկութեան բնաւորութիւն ունեցող, թատրոնների տեսակէտից: Գերմանացիները ուղղակի մեր համեմատութեամբ մանուկներ են: Այս բանին համոզուելու համար հարկաւոր չէ ոչ մի տեղ էլ գնալ բաւական է համեմատել Միւնխէնի, Բերլինի և Պիտիրբուրգի զուարձատեղիների յայտարարութիւնները:

Ո՛ւստատանը այդ տեսակէտից առաջնակարգ երկիրն է: Ցաւալի է այն, որ այդ տեսակ յառաջադիմութիւնն ուրիշ ոչ մի բանում չի երկում:

Հարց է այժմ, այսպիսի պայմաններում ի՞նչ անէ պատանին:

Ո՞ւր գնայ աղատ ժամանակը, ի՞նչպէս գոնէ մի փոքր թարմացնի իրեն տպաւորութիւնները փոխելով:

Զէ որ մարդը ինքնաշարժ (աւտօմատ) չէ, մանաւանդ երիտասարդը, որը լի է կեանքով, որը ծարաւի էնորի, որը ձգտում է ինչ որ բանի: Ո՞ւր գնայ տօնին կամ տօնի նախօրեակի երեկոյիան, որը գոնէ մի փոքր հեռանց դաստիանի միասիսակ կահաւորութիւնից:

Ո՞ւր և մեմ իր մտերիմին նա մանակից անէ կամ պարզ կերպով խօսէ, կատակէ:

Ո՞ւր գտնի նա այնպիսի մարդիկ, որոնց հետ կարող կլինի իւր կրիեութիւնը լրացնել կամ միասին կարող կլինին որևէ է հարց պարզաբանել, որը գպրոցի ծրագրից գուրս է:

Աւագ, սրան կարելի է զրեթէ միշտ էլ

պատասխանիլ բացասական — ոչ մի տեղ և ոչ մէկի հետ:

Ես տպիրել եմ գաւառում և ինքս ինձ վրայ զգացել եմ միապաղպութիւնից առաջ եկած ձանձրոյթի ամբողջ սարսափը, ուուս կեանքի աղջատութիւնը, երբ չգիտես թէ մւու գնաս, մւու փախչես, ի՞նչ օյին հանիս, միայն թէ ազատուես անմիտ, մինչև մահ ձանձրացնող սովորականի կախաւդական շրջանից:

Այդ իսկ պայմաններում հանգստութիւնը, տօնը տանջանք է գանցում:

Եթէ հասակաւորի համար այդ տեսակ պայմաններում դժուար է ապրելը, ի՞նչ կլինի գիտ

չսթափուած պատանու վիճակը: Համար այս համար առաջ առաջ աշխատանքով բաւականանալ: Առաջ առաջ աշխատանիսկ, այսպէս կոչուած կենդրուններում, ինչպէս ասացի, աշակերտի գրութիւնը՝ մի քիչ լաւ է: Այնտեղ էլ չափազանց շատ է լիրք «գայթակութիւնը», որը իրեն է քաշում ոչ այնքան էլ ուժեղ կամքի տէր կամ ոչ ամուր ակզրունքներ ունեցող պատանուն: Կուլտուրական կենացքի, կուլտուրական թոյլ, խուլ, հանգստի հաղիւ նկատելի ճիւղերը այնտեղ չեն կարող միծ ոյժ ունենալ և միայն անհատներին են օգտակար լինում և ոչ մասսային:

Թէ ի՞նչ օրհասական նշանակութիւն ունի այդ ամենը երիտասարդութեան համար ըստինքին հասկանալի է: Եթէ հասակաւորները իրենց չեն կարող զսպել, յաղթել, գուրս գալ միջավայրի շրջանակից, պայմաններից, հապա ի՞նչ կարելի է պահանջել դեռ ևս չկազմակերպուած, զարգացման շրջանում գանուող գեռահասներից: Ճշմարիտ է, այսպիսի ծանր հասարակական պայմաններում ընտանիքը կարող էր շատ օգնել:

Բայց մեզանում, շնորհիւ դպրոցական հիմնարկութիւնների սակաւութեան և նրանց անկանոն դասաւորութեան շատ երեխաներ ստիպուած են թողնել հայրական տունը, գնալ օտարք քաղաք և ապրել մասնաւոր ընակարաններում, յաճախ շատ ծանր և փչացնող պայմաններում:

Բայց և նրանց համար, որոնք մնում են իրենց ընտանիքում, ընտանիքում, որ միծ մասամբ շրջապատի նկատմամբ մի անհրաժեշտ հակա-

դրութիւն չէ ներկայացնում, չի մտցնում նրանց կեանքի մէջ թարմացնող հոսանք: Մեզանում կարծես ընտանիքը սերտ չէ միացուծ, ընդհանուր շահերով չի ապրում: Ռուսաստանում ընտանեկան կեանքը նոյնպէս միօրինակ է և սահմանափակում է աւելի շուտ ընդհանուր ճաշով և նիւթական կարիքների անհրաժեշտ հոգսերով: Վերոյիշեալ բոլոր պայմանների հետեւանքը լինում է տխուր պատկեր—ոչնչանում են, կոպատանում են, անպատուղ կիրապով ծախսում է մասապ ոյժը անսպակութեան, հարրեցողութեան մէջ, միտքը, կամքը բթանում են, կենացնակութիւնը գեգունանում է:

Մեզանում (ոչ միայն ուսուցիչները, այլ և ծնողները, ընդհանրապէս աւագ սերունդը) սիրում են երիտասարդութեանը մեղաղքել սանձարձակութեան, կոպտութեան, անբարոյականութեան, ծուլութեան մէջ, բայց միաժամանակ, զրեթէ ոչինչ չեն անում նրա համար:

Միայն երեխաները զիպլոմ ստանան, միայն թէ աշակերտաները ծրագիրն անցնեն, իսկ ի՞նչ որ սրանից գուրս է, այն աւելորդ է:

Փորձեցէք, պարոններ, մի բան անել, զոնէ մի փոքր կեանք մտցնել, դպրոցի չոր, անբնական պայմանների մէջ, այդ անընդհատ գրքի առաջ նստելու, բառերի, վերացումների աշխատանքի մէջ: Թող որ գուր անկարող էք կերպարանափոխել դպրոցը, բայց նրա մէջ ուղղում մտցնելը ամբողջապէս ձեր ձեռքին է:

Զի կարելի մնալ այս գրութեան մէջ: Զի կարելի նմանապէս հաւատալ արտաքոյ

գպլրոցական հսկողութեան փրկութեանը. այդ  
սպարագրաֆների և յաճախ կասկածելի ար-  
ժէքի և ճշմարտութեան արգելումների երկար  
հաւաքածուին: Մեզանում կանոններ ու պա-  
րագրաֆներ միշտ էլ շատ են եղել, բայց նրան-  
ցից մի օգուտ միշտ էլ քիչ է եղել: Հրամանա-  
գրումներով չի կարելի բնութեանը յաղթել:

Մի անգամ ես խօսեցի կամ աւելի ճիշտ  
յանդիմանեցի մի աշակերտի, որ նա իրենց տա-  
նը քէֆ էր սարքել:

Իմ կշտամբանքներին ու համոզմունքներին  
նա սրտաբացութեամբ պատասխանեց «Էլ ուրիշ  
լինչ կարելի է անել այստեղ տօնին, ո» չի կու-  
րելի ամբողջ ժամանակը զբառվ զբառվել և միշտ  
էլ միենոյն փողոցով ցեխ կոխ տալ»:

Ի՞նչքան յաճախ եմ համոզուել այս տուր-  
կութեան բաւականաչափ ճշմարտութեանը (հո-  
գերանական ճշմարտութեանը):

Ահա բոլոր մտածող մանկավարժների և  
ծնողների, պատանիների բոլոր սարեկամների,  
բոլոր խելացի քաղաքագէտների խնդիրը հէնց  
ներկայ դէպքում այն է լինելու, որ այդ տիսակ  
առարկութիւնների հիմքերը խախտեն: Աշակերտ-  
ներին պէտք է հնարաւորութիւն տալ խելացի  
հանգստանալու, ընկերական յարաբերութիւն  
ունենալու, հնարաւորութիւն մաքերի փոխանա-  
նակութիւն ունենալու, քննելու հետաքրքրող  
հարցերը, արտայայտելու բացի ուսումնական  
նիւթից նուև այլ տեղ իրենց ընդունակութիւն-  
ները. մի խօսքով հնարաւորութիւն տալ զոնէ  
շաբաթը մի անգամ ապրելու, շնչելու իրենց ու-  
զածի պէս, ժամանակ անցկացնելու յատկապէս

հետաքրքրական և կուլտուրական ձևով, կամ թէ  
ուղղակի անվասու չարաձնիութիւններ, կատակ-  
ներ անելով:

II.

Ի՞նչ ձեռվ, ի՞նչ միջոցներով կարելի է հաս-  
նել յիշածանպատակին: Սրա համար կամ շատ միջոցներ: Կարե-  
լի է գպլրոցին կից կազմակերպել խաղեր, սպօրտ,  
զբուցարտութիւն և այլն:

Բայց ամենից լաւ, ամենից լրիւ միջոցը,  
որը կարող է ընզպրկել զուարձանալու և հան-  
գտեան, մտաւոր հետաքրքրութեան բոլոր ձե-  
ւերը, իմ կարծիքով, է ակմբանոցը կամ պարզա-  
ղէս ասած գպլրոցին կից կանոնաւոր և պար-  
բերաբար կազմուած աշակերտների հաւաքում-  
ները:

Առաջ պարզենք այն հարցը, թէ այդպիսի  
ակմբանոցը որոնցից պիտի կազմուի:  
Եհարկէ ամենից առաջ այդ գպլրոցի սա-  
ներից, բայց ոչ ըոլորից միասին, այլ թիչ թէ շատ  
նոյն հասակն ունեցողներից: Այլապէս անկարե-  
լի կինէր գտնել այնպիսի զբաղմունքներ, որ  
բոլորին հետաքրքրէր, միացնէր և ստեղծէր ընդ-  
հանուր ոգի և տոն:

Անդամների հետաքրքրութիւնները չափա-  
ղանց տարբեր կլինէին:

Բացի այդ չափից գուրս բազմամարդ հա-  
ւաքումները կիանգարէին նրանց ընտանիկան  
բնաւորութեանը և շատ կդուաբացնէին աղատ  
մթնոլորտ ստեղծելուն և գործերը կառավարե-

լուն։ Փոքր աշակերտների հաւաքումները հնաշ բաւոր է մեծ աշակերտների հաւաքումներից բոլորովին առանձին կազմակերպել, (բացառութեամբ յատուկ հանդիսաւոր դէպքերի, հանդէսների և այլն). և այն էլ բոլորովին այլ ձեռվ ու ծրագրով։

Բացի այդ՝ փոքրերի հաւաքումները այնքան էլ կարեոր և հարկաւոր չեն, որովհետեւ հրեխանները միշտ կարողանում են իրենց զուարձութեան համար միջացնել գտնել, կամ վէգ հն խաղում, կամ մըցում են, կամ կռւում, ձիւնից մարդ հն շինում և այլն։

Իսկ պատանիները, որոնք աւելի բարդ բան են փնտրում, որոնք անձնատուր են լինում զանազան լուրջ հարցերի, զգում են իրենց մէջ անձանօթ ոյժերի հոսանքը, իհարկէ այդ բոլոր զուարձութիւններով չեն կարող բաւարարուելու։

Փոքր աշակերտների համար բաւական է կազմակերպել խաղեր, երբեմն երաժշտական—գրական առաւտնիր, զբանանքներ։ Մինչդեռ մէծերի համար, 15—16 տարեկանների, հարկաւոր են աւելի բարդ, լուրջ, պարբերական զուարձութիւններ, այն է ակմբանոցներ։

Ուստի թող ակմբանոցները լինին միայն երկուշերեք բարձր գասարանների մէծերի առանձնաշնորհումները (սրանից իհարկէ չի հատեւմ, որ միւս գասարանները անուշադրութեան պիտի մատնուեն), վերջապէս, եթէ գպրոցական հիմնարկութիւնը բարձր գասարանների շատ աշակերտներ ունի, ապա լաւ է երկու ակմբանոց հիմնի ըստ գասարանների. (օրինակ Ե. և Զ. դասսարանները մի ակմբանոց, է. և Է. դասսա-

րանները մի ուրիշ)։

Աշակերտներին բաժանները հնարաւոր է միայն արտաքին սահմանները, այսինքն դասատուններն ի նկատի ունենալով։ Բաժաննել ըստ զարգացման, վարքի և այլն այդ կնշանակէ ամեն տեսակ վիրաւորանքների, պահանջների, սխալների խորը բանական ընկնել սրոնցից ոչ մի ելք չի գանուի։

Ակմբանոցում բացի աշակերտների մասնակցութիւնից կարեոր են և մէծերի, այսինքն մանկավարժական կազմի մասնակցութիւնը, որ գործը զեկավարեն և օգնեն աշակերտներին յարուցուած հարցերը պարզաբանելու։ Քիչ թէ շատ լաւ յարաբերութիւնների դէպքում աշակերտները միշտ էլ զնահատում են ուսուցիչների հետ պաշտօնական ժամերից դուրս եղած խօսակցութիւնները։ Հարկաւոր է, որ ուսուցիչները գան ոչ իբրև կարգի վրայ հսկողներ, այլ ակմբանոցի այնպիսի անդամներ, ինչպիսին են միւսները։ Բացի այդ՝ շատ ցանկալի է ծնողներին հաւաքումներին հրաւիրելը։ Բայց բոլորին հրաւիրելու հնարաւորութիւն չկայ, որովհետեւ այդ դէպքում հանդիսաւոր հասարակական հաւաքումներ կկազմուէին, ուր ամեն ինչ ցոյցի համար կը լինէր և հիւրերին զսւարձացնելու։ Իսկ ծնողների մէջ ընտրութիւն անել կնշանակէ տհագին թիւրիմացութիւնների ու դալմաղալների պատճառ դառնալ։ Հետեապէս այստեղ ևս պէտք է արտաքին սահման անցկացնել և հրաւիրել միայն ծնողական ժողովի անդամներին, իհարկէ ուր այս ժողովը կայ, վերջապէս հաւաքումներին ընտանիկան բնաւորութիւն տալու, աւելի կենդա-

նացնելու և կազմը լրիւ դարձնելու համար շատ կարեղը է, որ ակմբանոց մտնեն բարձր դասարանների աշակերտների ամենամօտիկ ազգաւկանները (իհարկէ ոչ բոլորը, այլ ով ուղում է աշխատել երիտասարդութեան համար, ում համար նրա հետ յարաբերութիւնը ուժախութիւն, բաւականութիւն է պատճառում):

Վերոյիշեալ բոլոր հասակաւորները ակրեանոց են մտնելու ոչ իբրև պատուաւոր հիւրեր, այլ աշակերտների հիտ հաւասար իրաւունքներով:

Ակմբանոց հրաւիրել ուրիշ մարդկանց (կողմանկի), որքան էլ ցանկալի լինի, հարկաւոր չէ, որպէս զի վերաւորանքների, հաշիւների պատճառ չլինի, իսկ որ գլխաւորն է, որ վտանգ առաջ չգայ ակմբանոցը հետզիւտէ ընդդրձակելու և փոքրերին մեծերին ենթարկելու:

Եյսօր գուք հրաւիրեցիք մէկին, իսկ վաղը ձեղ մօտ կգան էլի 5 մարդ, որոնց գուք չէք կարող կամ իրաւունք չէք համարի մերժել, ապա կգան էլ աւելի և այլն:

Մինչդեռ պէտք է աշակերտները անպայշան գերտէղուն ակմբանոցում և տոն տան:

Արդէն այն հասակաւորները, որոնք իբրև ակմբանոցի օգտակար մասնակցողներ (ուսուցչական, հոգաբարձական մարմինները, ծնողական ժողովը բոլոր մօտիկ ազգականներով) իրենց ձեռվ կարող էլն փոխել ակըմբանոցի բնոյթը, այնպէս որ երիտասարդները կարող էին այնպէս ազատ, պարզ չզգալ իրենց, որպէս թէ իւր ակմբանոցումն է:

Բայց ինչպէս կանխօրէն կարելի է ենթա-

դրել և ինչպէս փորձը ցոյց տուեց, այդ վտանգի առաջն առնւում է նրանով, որ հասակաւորներից ոչ բոլորը, որոնք իրաւունք ունին, գալիս են հաւաքումներին, որովհետև կարճ ժամանակից յետոյ, երբ նորոյթի բոլոր զրաւչութիւնն անցնում է, ակմբանոցում մնում են այն ուսուցիչները և ծնողները, որոնք իրօք մեծ համակրանք են ունենում երիտասարդութեան նկատմամբ և որոնց երիտասարդութիւնը նոյն ձեռվ է պատասխանում: Այն անձինք, որոնք չեն կարողանում համակերպուել աշակերտներին, իրենց օտարացած են զգում, ուստի և շուտով դադարում են յաճախել:

Դպրոցի նկատմամբ կողմանկի անձերից կամ ընդհանրապէս բոլոր ծնողներից, ինձ թւում է, կարելի է հրաւիրել միայն առանձին երեկոյթների այս կամ այն կերպ օգնողներին (կարդացողների, նուագողների և այլն): Բայց սրան էլ պէտք է շատ զգոյշ գիմել, իսկ սկզբներում աւելի լաւ է ամեներին չդիմել:

Բանն այն է, որ ակմբանոցում գործող անձինք պէտք է աշակերտներ լինին: Նրանք պէտք է ամեն բան անեն և չլինին հանդիսատեսներ: Առանց այն էլ նրանք ամբողջ տարիներ նըստում են և միայն լսում են և նայում, թէ ուրիշները իրենց ինչ են հրամայում:

Թող փորձեն իրենց ոյժերը—այդ նրանց շատ աւելի ուրախութիւն և օգուտ կբերէ:

Կեանքը գործունէութիւն է և երիտասարդութիւնը ոչ մի բանի այնպէս չի ձգտում, ինչպէս կեանքին, գործունէութեան, իրեն ցոյց տալուն:

Եւ որքան մեր գպիսցները աւելի հն ճընշում այդ արժէքաւոր յատկութիւնը, այնքան աւելի թանգ է իւրաքանչիւր հնարաւորութիւն, իւրաքանչիւր միջոց այդ արտայայտելու համար չէնց աշակերտների համար էլ հետաքրքրական է լսել իրենց ընկերոջը:

Մինչդեռ որևէ է դեբասանի, գիտունի հանդէս գալը սպառնում է նրանով, որ նրանից յետոյ երկար ժամանակ բոլոր աշակերտները կը ճնշուեն իրենց թոյլ ոյժերով հրապարակ գալ։ Այսպիսով ակմբանոցը կարող է դեբասանական կամ գասահօսաւթեան դահլիճ դառնալ։

Բացի այդ՝ ակմբանոցի անդամների համար կարևոր ու հետաքրքրական է քննադատելու, հակածառութեանը մասնակցելու հնարաւորութիւնը և այլն։ Ամենակին այս առեսակ բան չի կարող լինել եթէ գասահօսութիւն կարդում է ոչ թէ ընկերը, այլ որևէ է ուսումնական։

Ի նկատի ունենալով յիշեալ բոլոր ասածները, գասարօլիօրներ հրաւիրելը օգտակար կարող է լինել միայն 1) այն ժամանակից յետոյ, երբ աշակերտները իրենցից կթօթափին կը սւորականութիւնը և անվճականութիւնը. 2) երբեմն միայն զանազանակերպութեան համար, 3) առաւելադէս այն շրջաններում ու հարցիրում, որոնք աշակերտներին անմատչելի են. օրինակ այն դէպքում, երբ գասարօլեօրները չեն կարող «մրցում» առաջ բերել աշակերտների հետ։

Մօտաւորապէս նոյնը կարելի է ասել և ուսուցիչների մասնակցութեան համար, միայն այստեղ կարելի է այնքան զգոյշ չլինել չէ որ ուսուցիչը այնուամենայնիւ իրենց մարդն է։

## III.

Այժմ անցնենք ակմբանոցի կազմակերպութեան, կանոնագրութեան։

Սովորաբար կանոնագրութեանը մեղանում մեծ նշանակութիւն են տալիս և նրա քննութեան և կազմելու համար չափազանց շատ ժամանակ են վատնում. աշխատում են նախատեսնել ամեն մի մանրամասնութիւն և յօդուած յօդուածի վրայ են աւելացնում։

Ուստի յաճախ այնպէս է լինում, որ որևէ խմբակցութիւն աւելի առաջ է քայրայւում, բան կանոնագրութիւնն է պատրաստում կամ կանոնագրութիւնից անմիջապէս յետոյ է քայրայւում։


Ինձ թւում է, որ կանոնագրութեան մշակման համար որքան կարելի է քիչ ժամանակ պէտք է նույրել որ շուտով գործի անցնուել։ Պէտք է միայն գործունէութեան և կազմակերպութեան հիմնական սկզբունքները որոշել իսկ յետոյ կեանքը ցոյց կտայ ինչ, պէտք է աւելացնել և փոխել։

Եւ փորձի ազգեցութեան տակ պատրաստած կանոնագրութիւնը անպայման աւելի յաշող կլինի, բան այն կանոնագրութիւնը, որը պատրաստուած է կանխօրէն, թէև մի տարսւայ ընսութիւնից յետոյ։

Ակմբանոցի կազմակերպութեան հիմնական սկզբունքները, համաձայն նրա նշանակութեան, անհրաժեշտ է դնել հետեւեալը։

1) Ակմբանոցի բոլոր անդամները, —աշակերտներ, ուսուցիչներ, ծնողներ—բոլորովին հաւասար իրաւունքներ ունին։

2) Գործերի վարումը, ժողովների կազմա-



կերպութիւնը, ժողովսերում երկալը, կառավարսրելը կենդրոնանում է տռաւելապէս աշակերտների ձեռքում, ընդհանրապէս այն ամենը, ինչ աշակերտների համար է—աշակերտների միջից պիտի լինի:

Այլ կերպ երբէք ակմբանոցը չի կարող պատանիների հոմար ձգտման կենդրուն լինել երբէք չի կարող նրանց համար, այսպէս ասած, իրենց ընտանիքը դառնալ:

Զէ որ ինսամարկուածի գերը գպրոցում և տանը բաւական ձանձրացնում է աշակերտին և օգտակար է գոնէ երբեմն զգալ իրեն ոչ երիխայ, ոչ աշակերտ, այլ հասարակութեան հաւասարազօր անդամ, նոյնիսկ տանտէր:

Այնուհետեւ, այդտեսակ կազմակերպութիւնը երաշխաւորում է, որ զուարճութիւնները, դասախոսութիւնները, ընդհանրապէս ամբողջ գործալարութիւնը համապատասխանէ երիտասարդութեան պահանջներին, հետաքրքրութեանը:

Վերջապէս դրա շնորհիւ ակմբանոցի անդամները հող չին ունենայ չափազանց պահանջներ անելու, անհիմն քննադատելու, որովհետեւ միշտ կարելի է առարկել. փորձեցէք արէք, ցոյց տուէք:

Ինքնաշխատութիւնը և նրա հիմ կապուած պատասխանատռութիւնը կկրկնապատկին, կեռապատկեն ակմբանոցի նշանակութիւնը:

Այդ սկզբունքները իրականացնել հեակեալ ձևով շատ ել դժուար չէ:

Ակմբանոցը կառավարում է աւագների յատուկ խորհրդով, որը կազմուած է աշակերտներից, ուսուցիչներից և ծնողներից կատարուած

ընտրուածներից, համապատասխան մասնակցողների թուի: Աւելի կարենոր հարցեր վճռելու, գործունէութեան ընդհանուր ծրագիրը քննելու համար և այլն խորհուրդը ընդհանուր ժողովներ է կազմակերպում: Իսկ իրագործելը և ընթացիկ հարցերը լուծելը աւագների վրայ են մնում: Այսպիսով ամեն ինչ կազմուում է ընդհանուրի համաձայնութեամբ, այսինքն գլխաւորապէս աշակերտների և նրանց միջոցով իրականանուում: Վախենալ, որ աշակերտաները մեծ թիւ կազմելով կարող են որևէ համարձակ որոշում կայացնել և այնպիսի բան անել, որ յետոյ դժուար լինի հարթել՝ ոչ մի հիմք չկայ:

Աշակերտները ընդհանրապէս ժողովներում հեշտութեամբ ենթարկուում են բանական առարկութիւններին, այնպէս որ, եթէ նրանց մէջ ոչ ոք չլինի, ապա միշերկու միծ անդամների (ուշ սուցչի կում ծնողի) համոզելը միշտ նպատակի կհասցնի:

Բացի այդ՝ աշակերտները այնքան կգնահատեն ակմբանոցը և իրենց գրութիւնն այնաեղ, որ երբէք միասին այնպիսի բան չեն անի, որ իրենց հիմնարկութեան և նրա անդամների պատիւը ձգուի: Իսկ եթէ աշակերտներից որևէ է մէկը իրեն անվայելուց պահէ և որևէ յանդուգն բան անէ, ապա հաւանօքէն իսկոյն կզապուի իր ընկերների կողմից: Ներկայ դէպքում նոյնպէս լաւ կուղէ միծերի ներկայութիւնը աշակերտների մէջ իրեն հաւասարազօր յանակիորդների, որոնց հետ աշակերտները պարզապէս զրուցում են, ընդհանրապէս միասին ժամանակ են անցկացնում:

Այսպիսով ստեղծում է հասարակական-ընտանեկան մթնոլորդ, ուր մոքսվ էլ չի անց-նի իրեն իրբև «աշակերտ» իրեն «երիխայ» պա-հել: Նայեցէք ամենայանդուգն աշակերտին—երբ նա դասարանումն է և երբ նա տանն է և երբ հիւր կամ ծնողների համ հիւրեր է ընդունում:

Երկու բոլորովին տարբեր մարդիկ են, այստեղ անդուսպ է, այստեղ ինքը համեստու-թիւնն է:

Այսպիսով փոփոխութիւն է լինում և ակըմ-բանցում, որին շատ նպաստում է տրամադրու-թիւնը և ընկերների միջամասնութեան կար-ծիքը:

Եւ այսպիսով ենթագրել որ տուեալ հաճ-գամանքներում աշակերտները օգտուելով ան-կախութիւնից կարող են դիտաւորեալ այն ի չա-րը գործ գնել ի վնաս իրենց և դպրոցի՝ ոչ մի գէպքում չի կարելի:

Բայց ցաւն այն է, որ երբեմն աշակերտ-ները շնորհիւ անփորձութեան, երիտասարդու-թեան կարող են այնպիսի քայլեր անել որ կը-վնասին և ակմբանոցին և հէնց դպրոցին:

Բայց այդ՝ պէտք է ուշադրութիւն առնել և այն, որ քանի որ ակմբանոցը կապուած է դպրոցի հիա, ապա նրա պատասխանաւութիւ-նը ընկնում է տեսչի և մանկավարժական խոր-հրդի վրայ:

Այստեղից էլ առաջ է գալիս տեսչի և ժո-ղովի վերահսկողութեան անհրաժեշտութիւնը: Իսկ այն արտակարգ գէպքերաւմ, երբ կարող է որևէ բան վնասի դպրոցին և կըթութեան և նպրոցի հիմնական խնդիրներին հակառակ լի-

նել, տեսուչը և մանկավարժական խորհուրդը ոչ միայն կարող են, այլ և պարտաւոր են գործ գնել իրենց ամբողջ ազգիցութիւնը, որ վտանգի առաջն առնեն: Եթէ այդ էլ չի օգնի, արգելելու, Սակայն ես հաւատացած եմ, որ հթէ ուսուցիչ-ները զործով հետաքրքրուեն՝ միշտ էլ հնարաւու-թիւն կունենան ժամանակին վտանգը նկա-տել և աշակերտներին ազգելով հետացնել այն, չդիմելով արգելքների ու հրամանների:

Յատկապէս յարմար է, որ այդ անեն այն ուսուցիչները (կամ ծնողները), որոնք ակմբանո-ցի աւագ են:

Բայց նոյն իսկ որևէ է անգգուշութեան դէպ-քում տեսուչը կամ մանկավարժական խորհուրդը աւելի լաւ կանէ, եթէ աշխատէ դիմել իրիտա-սարդների բանականութեանը և զգացմունքին, որին այդ դէպքում աւելի շուտ է հնթարկւում նա, բան երբ նրան աշխատում են հնազանդեցնել:

Ի՞նչպէս իրականացնել այդպիսի հսկողու-թիւնը, չդարձնելով այն, հնար եղածին չափ, նկացնող և աշակերտներին անհաճոյ:

Սկմբանոցում, ինչպէս և դպրոցում, կա-տարուող ամեն բանի ընդհանուր հսկողութիւնը, ինարկէ, պատկանում է տեսչն:

Գործի կառավարութեան և ամեն տեսակ սխալների առաջն առնելու համար, անհրաժեշտ որ ակմբանոցի նախագահը լինի ուսուցիչ—ա-ւագներից մէկը, ըոլոր ուսանողների ընտրու-թեամբ:

Այդ նախագահին է ամենից յարմար, գոր-ծին տեղեակ լինելով, հարթել բոլոր անհարթու-թիւնները և զործին ընթացք տալ եթէ այն

վատնգաւոր կողմն է թեքուած:

Բոլոր հաւաքումներին, ընթերցանութիւնս-ներին այդպիսի նախագահը, աւելի փորձառու լինելով կարող է ժամանակին զսպել բորբոքուող կրքերը, անտեղի հանաքները, քաղաքական-գրաքննական տեսուկէտից վատնգաւոր ճառիրը և այլն:

Այլապէս չե՞ որ «կրակը ձգել» ապա հանդցնելո դժուար է:

Մի քանի անգոյշ խօսքիր կարող են վէճի պատճառ դառնալ և դպրոցի համար միծ անտխորժութիւններ ստեղծել:

Նախագահի ամենադժուար և միաժամտնակ անխուսափելի պարտաւորութիւնն է լինելու, ի նկատի տնինալով մեր ընդհանութ պայմանները, ոտանաւորների, յօդուածների յայտնի գրաքննութիւնը, որոնք նշանակուած են հաւաքումներին կարգացուելու համար: Չե՞ որ մի որեէ սուր ոտանաւոր կարող է պատճառ դառնալ ակմբանոցի վակման և դպրոցի ծանր պատասխանաւորութեան:

Ասենք նախագահը կարող է այդ անհաճոյ պատասխանաւորութիւնը վատնանալ աշակերտաւագներին, իրեն թողնելով այնուամենայնիւ վերջին խօսքը:

(Շարադրութիւնները սովորաբար կարեք չկայ գրաքննութեան ենթարկելու, որովհետեւ աշակերտները այդ մշակում են մասնագէտ ուսուցչի օգնութեամբ կամ տալիս են վերջինիս նախագէս նայելու):

Բացի այդ նախագահ - ուսուցիչը, առաջն քամբանակներում, քանի որ դեռ աշակերտները

կրաւորական դեր ունեն, անփորձ են, անհրաժեշտ է որ գործը դեկավարէ, խորհուրդ տայ, թմրածներին շարժէ և այլն:

Որքան անդամների մէջ փորձառութիւնը, ներգործականութիւնը, հասարակական ողին և կարգապահութիւնը զարգանայ, նախագահը պէտք է աւելի ու աւելի մի կողմն անցնէ, գործը յանձնէ աշակերտներին և միշտ պատրաստ լինի ծայրահեղ դէպքում օգնութեան գնալ:

Վերջ ի վերջոյ իրեն ոչ անհրաժեշտ դարձնել՝ (առանց գործին վնասելու) ահա դեկավարի լիգէալը:

Իւր բոլոր քայլերում և մանաւանդ իր հըսկողութեան խնդրում նախագահը պէտք է լինի վերին աստիճանի քաղաքավարի և զգոյշ: Միայն այն գէպքում, իրը որեէ բան սպառնում է խանգարել դպրոցի կեանքը կամ վնասել նրան՝ նախագահը կարող է օգտուել իր իշխանութիւնից: Բայց լաւ է գործն այդտեղ չհասցնել, այլ աշխատել ազգել աշակերտների կարծիքներին (մհեղաւորների կամ աւագների կամ բոլոր աշակերտների) այնպէս, որ իրենք ամեն ինչ հարթէին: Եթէ որեէ վճիռը հէնց դուր չի գալիս նախագահին կամ նա այդ անյաջող է համարում, ապա այդ նրան իրաւունք չէ տալու օգտուելու իր իրաւունքներից կամ ուղղակի իր հեղինակութեամբ ձնշում գործ գնելու: Այդ աշակերտների մէջ շատ անբաւականութիւններ կառաջացնէր և շատ կնսեմացնէր ակմբանոցի նշանակութիւնը, իրեւ հասարակականութեան դպրոցի:

Անձնապէս կատարած սխալների հիման իրայ ամենից աւելի լաւ է հասկացում՝ նշշ-

մարտութիւնը։ Նոյնպէս և այն գէպքերում, երբ նախագահից աւելի քիչ աշխատանք և ջանք կապահանջուէր մի որևէ է բան անհլու, պէտք է աշխատէ այդ անել տալ աշակերտների միջոցով, յանձնել այդ աւագներին, օրապահներին և այլն։

Ընդհանրապէս նախագահը պէտք է հեղինակաւոր անձն լինի և միաժամանակ կարող թափանցելու աշակերտաների հոգերանութիւնը, հետաքրքրութիւնը, որը կարող է նրանց հետուրախանալ և տրտմիլ նա պէտք է կարողանայ որոշ գէպքերում ինքը գտանալ նոյնպիսի պատանի, ինչպիսի են իր աշակերտները։ Այն ժամանակ նա կարող է ակմբանոցի անհրաժեշտ հիմքը դասնալ, ոգեսրողը, միացնող կենդրոնը, ընդհանրապէս հիմնարկութեան ամբողջ կեանքի դեկալար։

Այդպիսի նախագահի դրութիւնը և պարտականութիւնը բաւական ծանր է։ Նա պէտք է միշտ հետեւ՝ որ մի կողմից չկրծառուի աշակերտների ինքնուշառութիւնը և անկախութիւնը, միւս կողմից, որևէ կերպ ակմբանոցը և դպրոցը չվասուեն։

Ուստի և շատ անհրաժեշտ է, որ նախագահը վայելէ մանկավարժական խորհրդի և աշակերտաների վստահութիւնը, որը և մասամբ ընտրութեան եղանակով ապահովւում է։ (սկզբում մանկավարժական խորհուրդը ընտրում է մի քանի ուսուցիչների աւագներ, ապա նրանցից բոլոր աւագները, այսինքն գլխաւորապէս աշակերտների ներկայացուցիչները ընտրում են նախագահ։)

Այսպէս ուրեմն, թող ամեն բան աշակերտների միջոցով լինի, թող մեծերը փոքր անդամներին ղեկավարեն ծայրահեղ գէպքերում և այն էլ թող աւելի վստահանան իրենց պատճառարտութեան ոյժի, իրենց ազգեցութեան վրայ։ Թող ակմբանոցի կազմակերպութիւնը և նրա գործունէութիւնը ամենից առաջ աշակերտաների հետ մշակուեի, որ այդ մի ընծայ չլինի, որն առաջարկում է խնամող վարչական ձեռքը, այլ որ այդ լինի իրենց սեփական ծեղքերի ստեղծագործութիւն։

Մի բան ստեղծել կազմակերպել—գժուաբաշխատանք է, բայց այդ ամենից արդիւնաւէտն է, արժէքաւորը, ամենից աւելի բանականութիւն առուղը։ Թող երիտասարդ ակրօնադը այդ սովորէ, թող գոնէ իր դպրոցական նեղ շրջանում վորձառութիւն ձեռք բերէ։

Յետոյ կեանքում այդ դրբի տեղեկութիւններից շատ պէտք կգայ։

#### IV.

Բայց իսկապէս ինչո՞վ զբաղուել ակմբանուցում։

Ի՞նչ կարող է և պէտք է նա առաջարկի իր անդամներին։

Որովհետեւ ակմբանոցը իր նախագահի համաձայն պէտք է ծառայէ և հետեւապէս զբաւէ միծամանութեանը և ոչ թէ միայն ընտրուած անհատների, ապա պէտք է նրա մէջ կենդրուացնել, որքան հնար է, բազմազան զբաղմունքներ և ժամանցների ձեւեր։ Զի կարելի ակմբանոցը դարձնել գիտական ժողովարան։ Այդ միայն կա-

բող է մի բանիսին բաւարարի, վերջիններիս էլ չի կարող անհրաժեշտ հանգստութիւնը տալ:

Քանի որ աշակերտը ամբողջ շաբաթը զբաղ-  
ուած է, միշտ զլիով է աշխատում, բնական է,  
որ նա կարիք է զգում որ և է այլ բանով հե-  
տաքրքրուելու:

Կարիք չկայ վախենալու նաև ծիծաղաշարժ  
և ընդհանրապէս ոչ լուրջ տարրից կամ այդ  
բանին նախապաշարած կամ արհամարհանքով  
նայել: Ծիծաղն օգտակար է մարդու համար,  
մանաւանդ ուսւ մարդու, որը ընկճուած է մի-  
օրինակ և միապաղադ կեանքի տպաւորութիւն-  
ներով:

Ամենալուրջ մարդը երբեմն կարիք է զգում  
ոչ մի բանի մասին չմտածել, անձնատուր լինել  
բռպէական, մակերսասյին զուարձութիւնների,  
ուրախութեան, ոչինչ նշանակութիւն չունեցող  
գրոյցների և այն:

Արուեստը, իբրև զգացմունքը շօշափող,  
պէտք է այդ հաւաքոյթներում նոյնպէս տեղ ու-  
նենայ. (բայց զարձեալ աւելորդ է, որ այդ ան-  
պայման լինի որևէ է լուրջ բան): Առածից ստ-  
կայն չի հետեւում ամեննեին՝ որ ամեն լուրջ  
բան պէտք է ակմբանոցից հեռացուի:

Պատանիների մեծ մասն այդ հասակում  
(16—19 տարեկան) սովորաբար հետաքրքրուում է  
շատ հարցերով, որոնք շատ հեռու են դպրոցա-  
կան ծրագրից:

Գլխում վխտում են մտքերի ու կասկած-  
ների խմբեր և պատանին ձգտում է զրանց մա-  
սին զրուցել:

Ուշը չգարձնել այդ պահանջի վրայ կընդա-

նակէ վանել իրենից աշակերտութեան ամենա-  
մեծ և ամենահետաքրքիր մասը:

Այսպէս ուրիմ, ակմբանոցը պէտք է իր  
մէջ պարփակէ ամենատարբեր տարրերը, բա-  
ւարարէ ամենաբազմազան պահանջներին:

Քննենք այդ աւելի պարզ ու մանրամասն:

Լուրջ պահանջներին բաւարարելու համար,  
որպէսպի մտաւոր հետաքրքրութիւն զարթի և  
օգնենք զբաղեցնող հարցերը վճռելու՝ ակմբանո-  
ցում պէտք է գասախօսութիւններ, յիշողութիւն-  
ներ, կարգալ որևէ է անձնական ապրումների մա-  
սին զեկուցանել, զրուցել յարուցած հարցի շուրջը:

Բայց այդ բոլոր ընթերցումները պէտք է  
շատ համառօտ լինին և զասախօսութեան բնոյթ  
չունենան: Զէ՞ որ կրատորական ունկնդրութիւննը  
բաւական ձանձրացրել է աշակերտներին:  
Շարադրութեան կամ որևէ զեկուցման նպատակը  
այստեղ լինելու է ոչ այնքան ուսուցանել, որքան  
որ և է հարց բարձրացնել, մտքերի փոխանա-  
կութիւն առաջ բերել, մի բանով հետաքրքրել  
կամ իր տհակետից լուսաբանել որ և է թեմա:  
Շատ դէպքերում օգտակար կլինէր, փոխանակ  
շարադրութեան, պարզապէս փոքրիկ ներածու-  
թիւն անել, որևէ գրութիւն պարզել, որ հակա-  
ճառութիւններ առաջ գայ: Յարուցած վէճի ժա-  
մանակ, կարծիքների ընդհարման դէպքում, հա-  
կառակ ապացոյցներ բերելու շնորհը աւելի  
շուտ կպարզի ճշմարտութիւնը և հարցի այսպի-  
սի բազմակողմանի կենդանի լուսաբանութիւնը  
աւելի շուտ կդրաւէ միծամանութեանը և նրա  
ոգին կշարժէ:

Միաժամանակ այդ նման չի լինի դաստարանին:

Ի նկատի ունենալով յիշեալ նողատակը ինձ թւում է ամենից յարմար են այն թեմաները, որոնք վերաբերում են աւելի կենսական ու սըլտին մօտիկ հարցերի, որոնք վերաբերում են այն բոլոր կասկածներին, ապրումներին, որոնք յուզում են երիտասարդ հոգին:

Այդպիսի թեմաները զրաւում են աշակերտներին, իւրաքանչիւրը ձգտում է, եթէ ոչ ժողովում, գոնէ նրան հետևող մտսեաւող խօսակցութիւնների ժամանակ արտայայակ իր միտքն այդ առթիւ:

Այդ թեմաները քննելու ամենայարմար միջոցն է—ընսել գրական երկերը կամ բոլորին յայտնի տիպերը:

Իսկ գիտական շարադրութիւնները սովորաբար ձանձրալի են լինում, եթէ հեղինակն աշակերտ է և զբեթէ երբէք վիճարանութիւնների առիթ չի տալիս, որովհետեւ գրողն այդ հարցում իր ընկերից աւելի ուժիկ է լինում:

Գիտական թեմաները յարմար են, եթէ շօշափում են տեղական հարցեր և յարմարեցրած են որ և է աչքի ընկնող գէտքի կամ թէ երբեմն, բազմազանութեան համար, ուսուցիչներից մէկն է հանդէս գտալիս:

Բացի բուն շարադրութիւններից միծ հետաքրքրութիւն և նշանակութիւն ունին զանազան յիշողութիւններ կամ պատմուածքներ աշակերտների, ինչպէս և հասակաւորների իրենց գրածներից:

Յատկապէս օգտակար կլինէր, եթէ ծնող-

ները կամ ուսուցիչները իրենց փորձը և ապրումները մասնակից անէին շօշափելի օրինակով երիտասարդութեանը: Թող երիտասարդները զգան կեանքի առեղծուածների գժուարութիւնը, խճառած և բարդ լինելը:

Հաւաքումների լուրջ մասին պիտի վերագրել նաև ակմբանոցի զանազան հարցերի, առաջադրութիւնների քննութիւնը:

Այդ անդամների համար հետաքրքրական է, մէմիանց հետ և ակմբանոցի հետ աւելի սերտ է կապում և նրանց օգուտ ու բաւականութիւն է տալիս: Բայց տուեալ գէպըում պէտք է զգոյշ լինել որ քննութիւնը սանդի մէջ ջուր ծհծել չդառնայ կամ ինչ որ խաղ և կամ մի քանի ապատանի» հոետորների մըցումն:

Շատ օգտակար է ունենալ ընթերցանութիւնների և շարադրութիւնների կամ թէ ուղղակի գեղեցիկ և հետաքրքիր պատկերներ ցոյց տալու համար պլուէկցիօննի լապտեր, որի պատկերները կարող են երբեմն իրենք աշակերտները պատրաստել:

Լաւ է ակմբանոցի համար բերել տալ ամսաթերթեր, օրաթերթեր, պատկերներ, տալասներ և այլն: Մի մասը ակմբանոցը կարող էր ինքը իր միջոցներով բերել տալ, մի մասը կարող են ուսուցիչները բերել, իսկ պատկերները, տալամները կարելի է հաւաքումների ժամանակ բերել աշակերտական զրադարձնից:

Բոլոր վելոյիշեալ աւելի լուրջ զբաղմունքները այս կամ այդ գրութիւնն են ունենալու հայած աշակերտների զարգացմանը և պահանջներին, բայց երբէք չեն կարող հաւաքոյթի ամ-

բողջ ժամանակը գրաւել բացառութեամբ շատ  
հազուադէպ յատուկ օրերի:

Մնացած ժամանակը պէտք է նուիրել եր-  
փեցողութեան, գոլծիքների վրայ նուագելուն,  
շաւ արտասանելու, պարերի, զանազան խաղերի  
և ժամանցների, մարզանքի (սպօրտի) վարժու-  
թեան և այլն:

Խմբական երգը, եթէ կայ յարմար դեկա-  
վարող—կազմակերպող, շատ է գրաւում աշա-  
կերտներին և յատկապէս գնահատելի է նրանով,  
որ բոլորին գործող անձն է գարձնում:

Զութեակ, դաշնամուր, բալալայկայի կամ  
փչող գործիքների խումբ և այլն նոյնպէս ակըմ-  
բանցում իր տեղը կարող են ունենալ:

Յատկապէս անհրաժեշտ է ակմբանցի հա-  
մար գաշնամուրը ակօմպանիմենտի, ինքնուրոյն  
նուագելու և պարերի համար: Առանց այդ գոր-  
ծիքների երեկոյթները բաւական տիսուր են  
անցնում:

Աւելի լաւ է, եթէ երաժշտութիւնը շատ  
բազմազան լինի:

Ակմբանցը և խորն զգալու և ուրախու-  
թեան տեղ է:

Երբեմն որեւէ խմբական պար աւելի տեղին է  
լինում, տւելի է գրաւում, քան Բեթհովէնի սիմ-  
ֆոնիան:

Նոյնը կարելի է ասել և լաւ արտասանու-  
թեան համար ընտրուելիք նիւթերի նկատմամբ:  
Ինչ վերաբերում է խաղերին՝ ապա այսահեղ  
հնարաւոր է էլ աւելի բազմազանութիւն:

Թող ակմբանցում լինին և աղմկալի, բազ-  
մամարդ վազելու, շարժուելու խաղեր և այնպի-

սի խաղեր, ուր մեծ տեղը օրամտութեանն է  
տրւում և մի քանիսի համար միայն միտքը լա-  
րող խաղեր և այլն:

Շախմատ, դամա, զօմինօ, երեխաների բիլ-  
լիարտ և ամեն տեսակի այլ խաղեր շատ ան-  
հրաժեշտ են:

Վերջապէս եթէ մէկին այդ խաղերը ձան-  
ձրացրին, թող ինքը մտածէ, ինչ ուզում է. թող  
կուեն, ցատկեն, քաշեն միմիանց, յիմարու-  
թիւններ անեն, ինչպէս ուզում են, միմիայն թէ  
այդ ոչ ոքի վաս չտայ:

Ակմբանցից պէտք է միանգամայն վանել  
կեղծ լրջութիւնը, ասելով թէ աշակերտները մեծ,  
կեղծ լրջութիւնը, ասելով թէ աշակերտները մեծ,  
կեղծ լրջութիւնը ասելով վայել չէ այդ տե-  
սակ գատարկ և յիմար բաներով վրազուել: Այդ  
նկատողութիւնը միանգամից կատեղծէ լարուած  
ու լրցուած զրութիւն, որովհետեւ երիտասարդ-  
ները այդ տեսակ նկատողութիւնների համար  
շատ զգայուն են, կվերաւորուեն այդպիսի գէպ-  
քերում նոյնիսկ անհամակիր հայեացքներից:

Մինչդեռ առողջ, երիտասարդ մարմինը  
ցանկանում է շարժում, խիստ ծիծաղ, ուրա-  
խութիւն:

Եւ այս ոչ միայն բնական է, օգտակար,  
այլ և լաւ է նրա համար, որ անկեղծ է:  
Ինչո՞ւ ծերուկներ կանալ ժամանակից առ-  
աջան:

Թուած բոլոր զբաղմունքները այնպէս  
պէտք է յարմարեցը լինին, որ ակմբանցից  
մի քանի անգամները միւսներին չխանգալէին,  
այսինքն որ մի քանիսը զրուցեն այն ժամանակ,  
ելք միւսները պարում են, երբորդները մուկն

ու կատու են խաղում, չորրորդները՝ հրդում և այլն:

Այս ակմբանոցը կազմակերպելու ամենաշաբար հարցերից մէկն է:

Եթէ հնար լինի հաւաքումներն այնպէս կազմակերպել, որ քոլոր յաճախորդները թիչ թէ շատ իրենց սրտին յարմար զբաղմունք ճարհն, որ իւրաքանչիւրը զուարձանայ ուզ ինչի մէջ իրեն ուժեղ է զգում» ապա ակմբանոցի յաջողութիւնը կարելի է ապահովուած համարել:

Այդ նպատակին համունելու համար և այն էլ այնպէս, որ Բարեկլոնեան աշտարակաշինութիւն չառաջանայ, երբ ոչ ոք ոչինչ չի կարող անել հարկաւոր են մի քանի պայմաններ.

1) Ընդպարձակ բնակարան, որը կազմուած է մի քանի սենեակներից.

2) Մի քանի միասին մշակած կանոններ և զբաղմունքի ու ժամանակի բաշխումն.

3) Գիտակցական հանրային կարգութանութիւն՝ ընդունուած կանոններ ի կատար ածելու:

4) Լաւ յարաբերութիւններ, որոշ տեսակի զիջումն անդամների կողմից.

5) Աւագների կառավարելը.

6) Նոյնիսկ պարզ խաղերի միծ քանակ (շախմատ, գոմինօ, լոտո, և այլն) մի քանի հատ ամեն մէկից:

Կանոնները պիտի ամենալուրջ ձեր լինին, որոնք անհրաժեշտութեան արդիւնք են:

Իւրաքանչիւր սենեակ ստանում է որոշ նշանակութիւն (մէկը հանգիստ խաղերի համար և զրոյցների, մի ուրիշը ամսագրներ, օրաթերթեր, գրքեր կարդալու, երրորդը՝ պարերի մի

առ ժամանակ և ապա աղմկալի խաղերի և այլն):

Շարադրութիւններ կարդալու ժամանակ, երաժշտական բաժնի համար, որոնք նշանակուած են որոշ ժամերի, հարեան սենեակներում պէտք է լինի կատարեալ խաղաղութիւն:

Ակմբանոցի բոլոր մասնակցողների պարտաշ կանութիւնն է անպայման կատարել այս կանոնները. հերթափառ աւագների գործն է ժամանակին թիւրիմացութիւնների, կանոնները խախտելու առաջն առնել, վէճերի ժամանակ այնպէս դասաւորել վէճին մասնակցողներին և այնպիսի տեղեր տալ, որ երկու կողմերն էլ գոնման:

Ինչ վերաբերում է վարքի կանոններին, թւում է ինձ, որ զբանք բոլորովին աւելուր են: Ակմբանոցի մասնակցողներին քաջ յայտնի են կուլտուրական մարդկանց յարաբերութիւնների ընդհանուրից ընդունուած կանոնները և ներկայ գէպքում մասնակիցների լաւ յարաբերութիւնն գէպի ակմբանոցը, ընկերական յարաբերութեան լաւ մթնոլորդը, վերջապէս կուլտուրայի ոգին—այդ բոլորը ամենալաւ գրաւականն է ընդդէմ ամեն տեսակ վատ և անյարմար քայլերի ում կողմից էլ ուզում է լինի:

Ծայրահեղ գէպքերում կարելի է ընկերական դատ կազմել, եթէ միայն կարիք լինի:

Ակմբանոցի շէնքի համար դժուարութիւն չի առաջ գայ, որովհետեւ դպրոցում ակմբանոցի համար կարելի է յարմարեցնել բացի գանիճից նաև գասարաններ: Միայն այդ դասարանները թող սովորական դասարանի կերպարանք չունենան, որը կարող է միանգամմից սուցնող տպա-

մորութիւն թողնել: Առա ուստ և խանութիւն ուս-  
պանները աչք են ծակել: Պէտք է այդ բոլորը դուրս հանել և դասա-  
րանում դնել սեղաններ, պարզ նստարաններ, աթոռներ, ինչպէս սովորական սենեակում:

Աշակերտները այդ ամենը շատ են գնա-  
հատում:

Որովհետեւ անդամները ակմբանոցում շատ  
ժամանակ են անցկացնում, մօտ 4 ժամ անընդ-  
հատ, հասկանալիք է, որ պէտք է մի փոքր կազ-  
դուցուել: Ամենալաւ միջոցն է թէլ և հաց, ո-  
րովհետեւ ուստի սրաի համար այդ էժան է և սի-  
րելի: Ռուս մարդը սիրում է թէյի ժամանակ  
խօսել և միշտ էլ թէյը ամեն տեսակ հաւաքոյթի-  
տալիս է հաճելի ընտանեկան բնոյթ:

Այժմ կանցնեմ փողի հարցին:  
Խաղալիքներ գնելու, ծառաներին վարձա-  
տրելու աւելորդ աշխատանքի համար, թէյի, շա-  
քարի, հացի և այս բոլորի համար պէտք է թէկ  
ոչ մեծ, բայց կարևոր գումար:

Իհարկէ այդ բոլորը կարող էր դպրոցը  
վճարել: Բայց նախ ոչ ամեն դպրոց այդ կանէ  
և երկրորդ ակմբանոցն այդ զէպքում կկորցնէր  
որոշ չափով իր նշանակութիւնը:

Ակմբանոցը պէտք է հէնց անդամների ստեղ-  
ծագործութիւնը լինի, պէտք է նրանց սեփական  
հիմնարկոթիւնը գառնայ և ծառայէ իբրև գործ-  
նական միջոց հասարակական գործերը վարելու  
և մասնակցելու նրանց: Ռւսովի ամեն մէկը պի-  
տի սովորէ ոչ թէ միայն մի բան ստանալ այլի  
զբան փոխարէն յատուցանել ոչ միայն որևէ բա-

նով օգտուել, այլ և ստեղծել:

Գուցէ զպրոցը կարող է մի փոքր օգնել գնե-  
լով խաղալիքներ, կարասիք, ընդհանրապէս կա-  
հաւորութեան իրեր:

Այդ տեսակ ակմբանոցի ընթացիկ ծախսե-  
րը (ընդհանրապէս շատ քիչ են—մօտ 20—30 կ.  
մարդուն ամսուայ մէջ) պէտք է անդամների վը-  
րայ ծանրանան:



լիներաւ և Աս ունարո իստ  
մեր ընթացակի մէ Հ առաջ պատշաճ ծցած  
այս սկզբանքին այխողաք համավարագի խոյ  
հայտն ընթացակ գործ մասնակութան  
1 օջ—օջ տօն—մէ չկը տօն սկզբանքին) Եղ  
ՅՇ Աղմանաւ Հ պահ (ՅՇ բարսին մարզակ  
համացնան չայ

Արամանակ առաջանայ առաջանայ առա  
ճամանակ առ անդրացնակ մաս և առ անդր  
ակն համանայ և որ պես է ՈՇ ֆար  
պարագ Սահման միացն և Բա և առաջ առ  
առաջն ուստի պար համար ուստի և ու  
պես մարտ միացն է թիվ ժամանակ  
բայ և պահ և Այս առաջ առաջն համար առաջ  
առաջ և առաջ առաջն համար առաջ



Արամանակ առաջանայ առաջանայ առա  
ճամանակ առ անդրացնակ մաս և առ անդր  
ակն համանայ և որ պես է ՈՇ ֆար  
պարագ Սահման միացն և Բա և առաջ առ  
առաջն ուստի պար համար ուստի և ՈՇ  
ու առ բարս պահակ

Արամանակ առ պար կար և առ առ  
առաջ թիվ առաջ առաջ առ առ առ առ  
առաջ առաջ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

Արամանակ առ պար կար և առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ



Գիշե է 10 Կող.

Թաղթմանչի հասցեն

Шуша, Духовная Семинария